

N 225

U.S. 207341

C192607394

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
ЛЕНИНСКИЕ ИЛИ
СССР

003544

ՀԵՐԿԱՐՈՒՄ

891.994

2-83

№ 225

C1926X394

Ca351

№ 11

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 31 MAY 2011

891.995

Զ-83

ՍՏ. ՉՈՐՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ՅԵՐԿԱԹՈՒԴԻՆ



Հ. Ս. Խ. Հ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

№ 318

ԽՈՍԿՎ.

1926

ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Քաղցր և յերբեմն հիշել մանկության որերը:

Յերբ նստում ես ու մտաբերում, թե այս ինչ տարին այս պատահից, այն ինչ որը՝ այս, զգում ես մի անծայր սփռվածություն: Մանկության ամեն մի դեպք, յուրաքանչյուր մի անցք, լինի դա չնչին, ուրախ թե տխուր, անուշ և թվում:

Մանկությունս հիշելով, չգիտեմ ինչո՞ւ, նրա բոլոր որերն է ինձ յերևում են լուսազարդ, յերկնքը կապույտ, սրտերը սիրող, գեմքերը ժպտուն:

Մանկությունս հիշելով, դարձյալ չգիտեմ ինչո՞ւ, առաջին պահ ես տեսնում եմ միայն փոքրիկ, անհանգիստ մանուկներ, վոր վազվզում են փայտե-ձիեր հեծած. տեսնում եմ կաշաղակի բներ. ծառերի վրա, վոր հեռվից նմանում են ճղների արանքն ընկած հովվի փափախի. սուրեակներ՝ բարդիների կատարին, վոր ձագ տված մեղուների պես սեպերել են ճղները, և նորածին հորթեր, վոր պոչները ցցած վազում են փողոցներով: Տեսնում եմ սագերի դեղին ձագեր, վոր անվախ լողում են ջրերի յերեսին, և ես նրանց նայելով զարմանում եմ, վոր այդքան փոքր են ու չեն խեղդվում. տեսնում եմ մեր ծեր շանը շեմքի մոտ նստած, վոր դունչը թաթերի վրա դրած՝ աչքի տակով հսկում է անց ու դարձողին: Շուրջ անմիջապես հետո տեսնում եմ մեր շեկ, յերկար մազերով և հավաքնից շարունակ ձու գողացող կատվին, վոր մոռոցով ննջում է տատիս ծնկան, և վերջապես, իմ ծեր, իմ բարի տատին, վոր ձմրան յերեկոյին, ոջախի առջև նստած, իր սև տեր-վողորմեան քաշելով, պատմում է ի՞նչ դեերի, քաջքերի մասին, իսկ ես՝ մի փոքրիկ ու միամիտ տղա՝ հափշտակությունից ու յերկյուղից բերանս բաց, ունկնդրում եմ նրան:

Բայց այս բոլորից հետո, տեսնում եմ անհայտության խավարից—վաղուց մոռացված գերեզմաններից հանդես են գալի հարազատ ու ծանոթ դեմքեր և իբրև մի հին, վաղեմի յերգի կտոր, ականջիս հնչում է նրանց կենդանի զրույցը, ու յես, կարծես աշ-

Շապիկը յեվ նկարները
Գ. ԲՈՉԱՐԻ



59610-66

կարա, նրանց բերանից լսում եմ սիրելի խոսքեր, մոռացված խոսքեր:

Լսում եմ, թե ինչպես տանուտեր Արսենը հայհոյում է հորս, ծեր քահանա տեր-Սարգիսը գանգատվում է իր յեկամուտի պակասությունից, քեռի Սիմոնը խոսում է անտառում թագնված գանձի մասին, իսկ հարևան Պետրոսը հավան չի կենում յերկաթուղուն:

Մանկությունս մտաբերելով, ես առանձնապես եմ հիշում հարևան Պետրոսին և յերկաթուղին, վորի առաջին սուլոցը մեր գյուղում հնչեց այնպես, ինչպես վոր, ս. Գրքի ասելով, Գաբրիելյան փողը պիտի հնչի ահեղ դատաստանի ուր՝ իրարանցում գցելով մարդկանց մեջ:

Հարևան Պետրոսին ես մանավանդ հիշում եմ այն ժամանակ, յերբ յերկաթուղով որևե տեղ եմ գնում կամ դժգոհություն եմ լսում յերկաթուղու մասին:

Այս յերկուսին իրար հետ հիշելուս պատճառն այն է, վորովհետև սրանք... Բայց այդ մասին ավելի լավ սկզբից պատմեմ:

Ինչպես հայտնի է, առաջներում, նախ քան յերկաթուղին, մեր գյուղացիները ճանապարհորդում էին ձիերով, ճռուցող սայլերով և աղմկարար ու ճանապարհներից վոշու ամպեր բարձրացնող ֆուրգոններով: Ամենից շատ, ի հարկե, ֆուրգոններով:

Ինչպես մեր շրջանի բոլոր ավաններում ու շենքերում, այնպես էլ մեր գյուղում կային մի քանի ֆուրգոններ, վորոնց գործը այն էր լինում, վոր միշտ բուրդ, բամբակ, ալյուր, գետնախնձոր ու մարդ էին տեղափոխում գյուղից քաղաք, քաղաքից գյուղ կամ գյուղացիներին տանում էին սուրբ Գեվորգ ուխտի: Այդ ֆուրգոնատերերը բոլորն էլ իրար նման մարդիկ էին—յերկար միքուքով և մոլոկանի ձևով կտրած մազերով: Նրանք իրենց հագուստներով էլ մի քիչ նման էին մոլոկանի և հեշտությամբ ջոկվում էին գյուղացիներից, ինչպես գարին ցորենից:


Այդ ֆուրգոնատերերից մեկն էլ մեր հարևան Պետրոսն էր: Նա էլ հագնվում էր մոլոկանի պես, մազերը կտրում էր մոլոկանի նման և յեթե նրա փափախը, սև գեմքն ու սև մազերը չլինեին, կարելի էր կարծել, վոր նա իսկապես մոլոկան է:

Լավ մարդ էր հարևան Պետրոսը:

Յերբ իր քառաձի ֆուրգոնով նա վերադառնում էր քաղաքից, մենք, յերեսաներս աղմուկով ընդառաջ էինք գնում նրան և ծառս լինում ֆուրգոնի ճագերին: Մեր այդ խանդավառությունը նկատելով, նա գոպաններից հանում էր կանֆետ ու խնձոր և «ահա՛ ձեզ,

լակոտներ» ասելով, ցրում գետնին: Մենք, իրար թակելով, հավաքում էինք կանֆետն ու խնձորը և գնում շրջապատում նրան իր գրանը, լսելու թե ինչ լավ-լավ բաներ պետք է պատմի, կամ տեսնելու, թե ինչ է բերել քաղաքից:

Յեվ այնպիսի բաներ էր բերում նա քաղաքից իր տղաների



համար, վոր ես միշտ նախանձում էի նրանց: Իր տղաների համար նա բերում էր յերբեմն ճապարկ կոշիկներ, շվի, ծոպավոր գոտի, թյուրքական ֆես և, վերջապես, այնպիսի բաներ, վոր իմ հայրը յերբեք չէր առնում ինձ համար... Մի խոսքով՝ հարևան Պետրոսը շատ էր սիրում իր յերեսաներին: Բայց նա ավելի շատ սիրում էր իր ֆուրգոնը և ձիերին, և ամեն անգամ պարծենում էր, վոր իր ֆուրգոնի և ձիերի նման, չի գտնվի վողջ նահանգում:

— Հապա. մերը չմեռնի Պետրոսի ձիերի,— ասում էր նա,— նրանց նման ձի վորտեղ կա... Սրանք հրեղեն են, վոչ թե ձիեր... Մի անգամ Յերևանի ճամբին ամենքի ձիանքն էլ հոգնեցին, վեր թափվեցին, իսկ իմոնք, աչքով չտանք, կնպես էին գնում, վոնց վոր թևավոր,— ֆր՛ոռռ... Մալաղե՛ց...

Ու այս ասելով, հարևան Պետրոսը գոհությամբ ծծում էր ծրխամուրճը և աչքերը ծոր տալի:

Նա,— մոռացա ասել,— մի սովորություն ունեւ. միշտ մեր

տուն կը գար և ձմրան յերկար յերեկո՛ ելին հորս հետ կը նստեր ոջախի առջև ու զրույց կաներ զանազան բաների վրա, ամեն խոսքի վերջում կը կրկնէր.

— Եսպես բաներ, հարեան...

Մի անգամ, շատ լավ միտս ե (և ինչպես միտս չլինի այդ արժանահիշատակ ուրը), այդպիսի մի զրոյցի ժամանակ հայրս ասաց նրան.

— Պետրոս, հիմի ձեր գործը վատ կը լինի. ասում են, յերկաթի ճամբա պետք ե գա...

— Բարով, հազար բարի,—ասաց հարեան Պետրոսն անտարբեր,—գա ել, գնա ել. ինձ ինչ...

— Վո՛նց թե,—ասաց հայրս, ախր եդ յերկաթի ճամբան վոր գա, նրանից հետո ամեն բան՝ մարդ, ապրանք մաշինով կը տանեն կը բերեն, ենպես վ.ր ել ֆուրգոնի գործ քիչ կը մնա...

Այս խոսքերի վրա հարեան Պետրոսը չիբուխը հանեց լեւրանից և զարմացած հորս նայեց:

— Վո՛նց թե,—ասաց նա կարծես լսածը լավ չհասկանալով,—մաշինեն ֆուրգոնի բանը կարա՞նք անի:

— Իհարկե,—պատասխանեց հայրս,—մաշինեն ենպես բաներ ե անում, վոր ֆուրգոնն ըսկի չի կարող:

— Ե՛հ, դու ել բան ես ասում,—ասաց հարեան Պետրոսը և նորից չիբուխը կոխեց բերանը:

— Յես քեզ հաստատ բան եմ ասում,—ասաց հայրս և սկսեց բացատրել, թե յերկաթուղին ինչեր ե անում:

Նա ասում եր թե ինքը լրագրում կարդացել ե (հայրս լրագիր եր ստանում), վոր այդ գնացքը մեր խոտի ամբողջ դեղը մի ուրում կարող ե տանել «մինչև Փրանգստան», իսկ մեր ամբողջ գյուղը իրա տավարով ու մարդկանցով կը տեղավորի իր մեջ: Նա ուրիշ շատ բաներ ել պատմեց, բայց դրանցից միտս ե այն խոսքը, թե գնացքը կարող եր հարեան Պետրոսի ֆուրգոնն իրա ձիերով, ջրի դուլով ու գարու խախալով մի քանի ըսպելով թռցնել քաղաք:

Հորս խոսքերը լսելով, յես գտնմանում եյի, թե ինչպես կարելի ե ֆուրգոնն իրա ձիերով տանել այդպես. ապա այդ գնացքը չի կոտրվի՞, կամ ձիերը նրան քացի չեն տա: Մինչ ես զարմանում եյի այսպիս, հարեան Պետրոսը, ծխամորճը քաշելով, բեխերի տակ ծիծաղում եր հորս խոսքերի վրա: Յեվ յերբ հայրս վերջացրեց իր բացատրությունը, նա ծխամորճը հանեց բերանից, մոխիրը թափ ասկեց ոջախի մեջ ու դարձավ հորս.

— Հը՛մ, մերը մեռնի՞ Պետրոսի ֆուրգոնի, վոր մաշինեն նրա բանը պլտի անի... Ադա, մի տեղ վոր ձի չլծեն, մի տեղ վոր լուծ ու վոժժեր (յերասանակներ) չըլի, նրանով կարելի՞ ե մարդ ու ապրանք տանել-բերել...

— Քեզ ասում եմ վոր կարելի ե,—ասաց հայրս, և նորից սկսեց բացատրել շոգեկառքի առավելութունները:

Նա աշխատում եր հարեան Պետրոսին համոզել, վոր յերկաթուղու գնացքը կարողանում ե ամեն բան տանել. բայց հարեան Պետրոսը չեր համոզվում ամենևին և շարունակ կրկնում եր խընդավ:

— Հարեան, մի հավատա...

Յեվ սրանից հետո գյուղում ո՛վ վոր խոսում եր յերկաթուղու, և մանավանդ գնացքի առավելութունների մասին, հարեան Պետրոսը միշտ ասում եր ժպիտն յերեսին.

— Հարեան, մի՛ հավատա: Նա ֆուրգոնի տեղն ըսկի չի բռնի...

* * *

Հորս և հարեան Պետրոսի խոսակցությունից հետո, չեմ հիշում (չեմ հիշում, վորովհետև մանկությունը սահման չի դնում ժամանակի և տարածության մեջ), թե վորքան ժամանակ անցավ, յերբ յեկավ յերկաթուղին:

Անցավ մի տալի՞ թե՞ պակաս, միտս չի: Միտս ե միայն, վոր, այդ զրույցից հետո, մի ուր մեր գյուղում յերկացին պապղուն կոճակներով և յերկարածիտ կոշիկներով մարդիկ, ապա հայանվիցին ինչ-վոր կացնավոր բանվորներ, և սկսեցին կտրել մեր անտառի մի մասը,—թըրխկ հա՛ թրախկ... թրախկ հա՛ թրրխկ... Յեվ ինչպես եյին կտրում մեր լավ-լավ ծառերը... Վաղ առավոտից մինչև ուշ յերեկո ողը թնդում եր թըրխկոցի ձայնից: Կտրում եյին բոլոր կանաչ, ծաղկած ծառերը՝ լուլին, բոխին, կաղնին ու կեչին. կտրում եյին և այն տանձի ու խնձորի ծառերը, վորոնց տակից մենք ամեն տարի տանձ ու խնձոր եյինք հավաքում՝ թթու գնելու համար... Այդպես՝ չանցավ մի քանի ուր, մի առավոտ ել տեսանք, վոր մեր սիրուն անտառի կեսը չկա և նրա սարը կանգնած ե մերկ՝ տակից խուզած գլխի նման:

Անտառը կտրելուց հետո սկսեցին սարը ճղել: Ամեն ուր լսում եյինք դղրդոց, պալթուն և ինչ-վոր զարհուրելի ձայներ սարի կողմից, վոր շատ ժամանակ ինձ թվում եր, թե ուզում են մեր

գյուղը քանդել կամ մի աղետ բերել նրա գլխին: Միտս ե նույն-
պես, վոր սարը ճղելուց հետո, կամուրջ շինեցին մեր գետի վրա,
յերկաթներ ձգեցին և, այս բոլորի վերջում, մի որ ել մեր գյու-
ղում լավեց մի այնպիսի սուր սուրոց, վոր մեր լեռներում ու ձո-
րերում չեր լաված յերբեք: Այդ շփոցը լսելուն պես, գյուղում ամենքն
իրար անցան, ինչպես մի մեծ հրդեհի ժամանակ:



— Մաշինեն յեկավ, մաշինեն յեկավ, — ասում էին միմիանց:
Յեվ մարդ, կին, յերեխա — տնից, հանգից, գործի վրայից, բա-
նի տեղից, վորը բոբիկ, վորն անգղակ, — վազում էին դեպի յերկա-
թուղին:

Նրանցից շատերը շտապելուց տանում էին իրենց հետ ձեռքի
գործիքները՝ յեղան, փոցիս, գերանդի, ջրի կուժ: Մի կին, շատ
լավ միտս ե, շտապելուց ձեռքին տանում եր կերակրոտ շերեփը,
մի ուրիշը — գոգնոցը լիքը գետնախնձոր:

Տեսնելով վոր բոլորը գնում են, մենք ել՝ մայրս և յեղբայր-
ներս, հորս հետ գնացինք «մաշինեն տեսնելու». ճանապարհին մեզ
պատահեց հարևան Պետրոսը: Նա կանգնել եր փողոցում և հեգնան-

քով նայում եր «մաշինեն տեսնելու» գնացողներին. նայում եր և
կարծես ուզում եր ասել՝ «բոլորդ ել անասուններ եք. ինչ կավոր
վազում եք եղպես»:

— Դո՛ւք ել եք գնում, հարցրեց մեզ, յերբ մոտեցանք իրեն:
— Հա, — պատասխանեց հայրս, չե՞ս գալիս:

— Ինչպես յերևում ե, ձեր բանն ել ե հատել — ասաց նա
գլուխն որորելով:

— Ի՞նչ կա վոր, — նկատեց հայրս, — նոր բան ե, յերեխեքն
ուզում են տեսնել, կուզես դու ել արի: Արի՛ գնանք:

Հորս առաջարկի վրա հարևան Պետրոսը «չեմ ու չում» արավ,
այս ու այն կողմը նայեց և վերջը ասաց.

— Գիտեմ, մի բան չի, համա վոր ասում ես, դե՛հ գնանք:
Գնանք տեսնենք հլա եդ ինչ գատ ա, վոր եսքան խոսում են. տես-
նենք բանի նման ա, թե...

— Հիմի կտեսնես, ելի, — ասաց հայրս և սկսեց հավատացնել նրան,
վոր «մաշինեն» շատ լավ բան ե, վոր ինքը մի ամիս առաջ տեսել
ե Լոռու ձորերում (նա իսկապես տեսել եր) և անշափ զարմացել:

Յերբ հասանք յերկաթուղու մոտ, տեսանք մեր ամբողջ գյու-
ղըն այնտեղ: Ահել, ջահել ու յերեխա՝ ամեն տեսակ գործիքներով
ու իրերով զինված, հավաքվել էին շոգեկառքի ու վագոնների
շուրջը և դիտում էին զարմացած:

Թափվել են ճանձերի պես, — ասաց հարևան Պետրոսն ար-
համարանքով — կարծես կաթողիկոս ե յեկել կամ նաչալնիկ. վոնց
վոր շտեսներ ըլին:

Այս ասելով՝ նա մարդկանց հրեց այս ու այն կողմ և մոտե-
ցավ շոգեկառքին:

Մենք հետևեցինք նրան:

Յերկար ժամանակ նա անխոս դիտում եր շոգեմեքենան ամեն
կողմից, ինչպես մսագործը մորթելու անասունը. ձեռքը քսում եր
նրա կողերին, կարծես առջևը կանգնածը իր ձին լիներ, և շարու-
նակ քիթը վեր եր քաշում:

Ու յերբ ամեն բան դիտեց վերջացրեց, դարձավ հորս.


— Սա ե, հարևան, սա ե, վոր ֆուրգոնի բանը պըտի անի:

Յեվ խնդոց նա հորս վրա: — Վա՛յ, վա՛յ, հարևան... են վո՛ր սար-
սաղը իրա գլխից ձեռ վեր կուռնի ու սրա վրա կը նստի... Սա ի՞նչ
բան ե:

— Ե՛հ, ինչ ուզում ե ըլի, — շարունակեց հարևան Պետրոսը, —
հիմի վոր բանի նման չի... Սրա վրեն նստողը պետք ե ժամ ու

պատարագ անի, նոր նստի. թե՛ չե, մին ել տեսար տարավ սա-
րերով ու ձորերով քցեց. համ ինքը պլախի վշտի, համ վրեն նըս-
տողը...

Հարևան Պետրոսի այս խոսքերի վրա հայրս բացատրեց, թե



ճիշտ ե, գնացքն ել ընկնում ե յերբեմն, յերբ ճանապարհ քանդված
ե լինում կամ յերբ ուղիները միացնող մեխերը հանում են. բայց
դա միշտ հո չի պատահում:

Հորս բացատրությունը լսելուց հետո, հարևան Պետրոսը ծի-
ծաղեց փառ-փառ.

— Տեսնո՞ւմ ես, ասաց, — բա վոր ասում եմ՝ ծիծաղում են
վրես... Մի մեխ հանելով, վոր ես ահագին բանը պլախ ընկնի փը-
շովի, ել ինչացո՞ւ ե... Ի՞նչ եմ տվել ֆուրգոնին. մերը չմեռնի...
Նստի, վոժժերը ձեռք առ ու յեալլա՝ ֆը՛ռու Մալաղե՛ց... Յերբ
ուղես կը կանգնեցնես, յերբ ուղես կը քշես, թե չե — ի՞նչ ե սա...

Յեվ նա ձեռքը մեկնելով դեպի գնացքը, նորից ծիծաղեց փառ
փառ.

— Հա՛-հա՛, հա՛-հա՛...

Այդ որվանից շոգեկառքն իր վագոններով սկսեց գնալ-գալ
շարունակ: Որեկան մի քանի անգամ լավում եր նրա սուլոցը, և
նրա այդ սուլոցը լսելով՝ մենք յերեխաներս կտուրները յեղնելով,
նայում եյինք, թե վո՞նց ե գնում նա ամպի նման ծուխ հանելով,
վորի բեկորները ընդունելով ուղտի, ձիու և վարդապետի կերպա-
րանք՝ արագ վազում եյին վագոնների յետևից, բայց նրանց չհաս-
նելով, կես ճանապարհին, կարծես շատ հոգնելուց, հալվում եյին
շնչասպառ: Յեվ ամեն անգամ վագոնների այդ յերթը տեսնելով
մենք յերեխաներս, ուրախ աղմուկով, վագոնների նման շարվում
եյինք իրար յետևից և շվոցով պտտվում կտուրներին այնքան ժա-
մանակ, մինչև վոր դուրս կգար մի տանտեր և կբողբեր, վոր
մենք կտարում ենք ոճորքները կամ հող թափում յերթից: Յեվ
չգիտեմ ինչու, ում կտրան ել մենք «մաշինա» եյինք խաղում,
միշտ հարևան Պետրոսն եր դուրս գալի բողբելու. «Ի՞նչ եք ձե-
ներդ գցել թաղ ու թառակ — ասում եր նա ձեռքը գոտին խրած. —
կորե՛ք ձեր տները»: Ինձ մանավանդ զարմացնում եր այն, վոր
հարևան Պետրոսն այժմ շատ քիչ եր քաղաք գնում: Առաջ, ամեն
շաբաթ նա ֆուրգոնը բռն եր բարձում և ձիերի բոժոժների
ուրախ զնգզնոցով մեկնում քաղաք, այժմ սակայն շաբաթներով
մնում եր տանը, յերբեմն միայն աղբ ու փեխն եր կրում իր ար-
տերը կամ ճալաքար ու թուփ եր բերում այգու ցանկապատները
կարգի բերելու:

Մի որ, վոր շատ լավ հիշում եմ, յերբ նա ֆուրգոնով մասրի
թփեր եր բերել, հայրս հարցրեց նրան.

— Ինչպես յերևում ե քաղաք գնալու գործը պակասել ե, հարևան:

— Ձե՛, ո՞վ ե ասում, — պատասխանեց հարևան Պետրոսը: —
Գործ ինչքան ուղես. բայց ուզում եմ այգու պատերը շինել. վոչ-
խարն ու տավարը մտնում են, պատրուկները ուտում...

Յեվ այսպես ամեն անգամ յերբ հայրս հարցնում եր նրան իր
գործի մասին, նա միշտ ասում եր՝ գործ շատ կա, բայց ինքը չի
ուզում գնալ, վորովհետև բան ունի, պետք ե վերջացնի:

— Գիտես, հար՛ւան, — ասում եր, — գործ շատ կա, բայց մարդ
պետք ե իր տան համար ել մտածի՛, թե չե:

— Ի հարկե, — ասում եր հայրս. — պետք ե մտածի: Իսկ յես
կարծում եյի, թե մաշինեն պակասեցրել ե գործը:

— Չե՛, ըսկի յել չե՛,—ասում եր հարևան Պետրոսը,—ի՛նչ պակասեցնել: Գործ՝ յերբ ուզես՝ կա... Մաշինեն ֆուրգոնի բանը հո չի՞ կարող անել...

Ու շաբաթներն անցնում էյին շաբաթների յետեից, բայց հարևան Պետրոսը, իմեծ զարմանա իմ, շարունակ մնում եր տանը եքաղաք չեր գնում: Մինչդեռ յես ուզում էյի, վոր նա շուտ-շուտ քաղաք գնա և բոժոժների զընգզընգոցով վերադառնա այնտեղից, վորպեսզի մեր գոնով անցնելու ժամանակ կանֆետ ու խնձոր տա ինձ: Բայց նա չեր գնում, և վորովհետև չեր գնում, այդ պատճառով ձիերին ել գարի չեյին տալիս ամեն որ, վոչ ել թիմարում էյին առաջվա նման, այլ տանում էյին դաշտերը կամ անտառի բացատները արածացնելու:

Այսօրվա պես հիշում եմ, թե ինչպես նրա տղաները (հարե՛վան Պետրոսն ուներ չորս տղա) հեծնում էյին ամեն մեկը մի ձի և քշում դեպի դաշտերը. իսկ նրա կինը, վոր մարդու պես սիրում եր իրենց ֆուրգոնը և ձիերին, ամեն անգամ գնացքի սուլոցը լսելիս, չզիտեմ ինչու, անիծում եր նրան: Յեվ անիծելիս միշտ կրկնում եր այս խոսքերը.

— Ձենդ կտրվի՛, խնդրել եմ ասածուց...

Մինչ կինն անիծում եր այսպես, հարևան Պետրոսն անխոս շարունակում եր իր ֆուրգոնով քար, փայտ և աղբ կրել: Այդ գործի մեջ նա, ըստ իր սովորության, ել չեր յերգում, մեզ յերեխաներիս հետ հանաքներ չեր անում, մի բան, վոր ինձ շատ եր դարձացնում: Բացի այդ, վերջերս մեր տունն ել շատ սակավ եր գալիս և ընդհանրապես խուսափում ե հարևաններից ինչպես խոռ՝ված կամ մինչև սրտի խորքը վիրավորված մարդ: Սակայն մի որ պատահեց մի դեպք, վոր նրա տրամադրությունը փոխեց միանգամայն և նրան վերադարձրեց իր նախկին ուրախությունը: Այս դեպքը հարևան Պետրոսին պատճառեց այնպիսի մեծ հրճվածք:

* * *

Ինչպես եր պատահել, չզիտեմ, մի որ մեր գյուղից մի կով եր ընկել գնացքի տակ և յերկու կես յեղել: Դեպքը մահվան բռնի պես տարածվեց գյուղում. դա չլաված բան եր արդեն. ի՛նչպես, գնացքը կով ե սպանում... այ քեզ տարորինակ բան... Ու բոլորը, ինչպես գնացքը գալու առաջին օրը, շտապեցին դեպքի տեղը: Այդ բանն իմացավ և հարևան Պետրոսը: Պատմությունը լսելուն պես, նա բարձրաձայն խնդաց նստած տեղը:

— Հապա՛ վոր ձեզ ասում էյի՝ ծիծաղում էյիք վրես,—ասաց նա գլուխը հաղթական շարժելով.—Հիմի տեսա՛ք: Յերեկ մին, եսոր յերկու ինչեր արավ... Ես հլա մեկ, դեռ ո՛ւր ե տանումեկ... Սպասեցեք դեռ, սպասեցեք...

Յեվ նա նորից գլուխը հաղթական շարժելով ու ծիծաղելով գյուղացիների անմատթյան վրա, վոր թողին յերկաթուղին մեր գյուղը գալու, սկսեց թվել, թե դեռևս ինչ անավոր աղետներ պետք ե բերի յերկաթուղին մեր գլխին:—Եսոր կոփը ընկավ գնացքի տակ, եգուց յեղը կընկնի, մյուս օրը տավարածը, մի ուրիշ որ յերեխա, մի այլ որ մարդ, հետո կին, և այն ժամանակ ինչ կը լինի գյուղի վիճակը:

— Հը՛մ. վրես ծիծաղում եք,—ավարտեց նա իր խոսքը դառը ծիծաղով.—տեսա՛ք հիմի...

Նրա ուրախությունը չափ չկար. նա իրեն համարում եր հաղթող:

Ու մի ամբողջ շաբաթից ավելի գյուղի փողոցներում շրջելով ամեն մի պատահողի պատմում եր կովի դեպքը և ավելացնում, վոր գնացքը քանդելու յե գյուղացիների տունը, կտրելու յե նրանց բոլորի հացը և շատ ուրիշ բաներ. և միշտ, վորպես որինակ, բերում եր կովը: «Ձեզ որինակ են որվա կովը»—ասում եր նա: Ու այս ասելով, առաջարկում եր ամենքին, թե լավ կը լինի խնդիր տան տերություն, վոր «մաշինեն» ուրիշ տեղով բանեցնի:

Դրենք թե՛ աղբեր, չենք ուզում. քո ֆեսան ել քեզ ըլի, քո ոգուան ել. աշխարհը մեծ, դու միջին, քո մաշինեն տար վոր կողմով կուզես բանեցրու, միայն թե մեր գյուղից հեռացրու...

— Սարսաղ բաներ ես խոսում,—նկատեց հայրս:

— Վոնց թե սարսաղ,—ծուլ յեղավ հարևան Պետրոսը ցամաքը ձգած ձկան նման.—հապա լավ կը լինի, վոր ամեն որ, ամեն որ ֆեսավենք... Քեզ եմ հարցնում. լավ կը լինի... Տեսար եսոր կոփն սպանեց, եգուց ինձ կը սպանի, գալ որ քեզ կը սպանի... Հետո ես ուր կը տանի...

Մինչ հարևան Պետրոսն այսպես, յերկար խոսելով, աշխատում եր համոզել հորս, հայրս սակայն, չզիտեմ ինչու, բխի տակ շարունակ ծիծաղում եր նրա վրա, իսկ նրա վերջին խոսքերը լսելով՝ այնպես քրքջաց, վոր ինձ թվաց, թե մեր լավ հարևանը պիտի խռովի և այլևս մեր տուն չգա: Բայց յես սխալվում էյի: Այս խոսակցությունից հետո նա յելի մեկ-մեկ գալիս եր մեր տուն բանի, կամ յերբեմն հորս հետ զրույց անում առաջվան պես: Սա-

կայն մի որ պատահեց մի բան, վոր նա այլևս, իսկապես, վոտ չդրեց մեր տուն:

Այդ բանը պատահեց այսպես:

Մի որ, յերբ հայրս իր առած գարին քաղաք եր ուղարկել յերկաթուղով, մեր տուն յեկավ հարևան Պետրոսը և տխուր ու անխոս նստեց տախտի վրա: Դեմքից յերևում եր, վոր նա յեկել ե մի կարևոր բան ասելու, բայց, ըստ յերևույթին, չգիտեր, կամ մտածում եր, ինչպիսի սկսի:

— Ի՞նչ կա, հարևան,—հարցրեց հայրս:

— Վոչինչ,—պատասխանեց հարևան Պետրոսը և հառաչեց:

— Ի՞նչ ե պատահել, հարևան,—նորից հարցրեց հայրս.—տխուր ես յերևում:

— Վոչինչ,—կրկնեց հարևան Պետրոսը և նորից հառաչեց.—Ե՛հ ի՞նչ ասեմ... ել վո՛չ հարևանություն մնաց, վո՛չ բարեկամություն,—ասաց նա պատերին նայելով,—աշխարհը խառաք յեղավ...

Յեվ նորից լռեց:

— Ի՞նչ ե յեղել վոր,—հետաքրքրվեց հայրս:

— Ե՛հ, վոչինչ, վոչինչ, ասաց նորից պատերին նայելով:—Վոչինչ...

Յեվ յերկուսն ել լռեցին: Հայրս նայում եր հարևան Պետրոսին, իսկ հարևան Պետրոսը պատերին:

Կարճ լուռությունից, հարևան Պետրոսը դարձավ հորս և մեղմ, շատ մեղմ ձայնով հարցրեց.

— Գարին դրկեցի՞ր, հարևան:

— Հա,—պատասխանեց հայրս, այս անգամ ել ինքը պատերին նայելով:

— Հը՛մ,—չըթունքները սեղմեց հարևան Պետրոսը և լռեց, ու քիչ հետո շարունակեց.—խի՛, ձիանքն եստեղ, ֆուրգոնն եստեղ, դու...

Նա յել չշարունակեց. իսկ հայրս չկարողանալով իսկույն պատասխանել, նախ զլուխը կախեց ամաչկոտ հարսի նման և ապա, կարծեմ, ստեց.

— Գիտես, հարևան,—ասաց,—ես ուզում եյի, վոր շուտ տեղ հասնի, դրա համար ել մաշինով դրկեցի, թե չե՛ միշտ ել քու ֆուրգոնով չեմ դրկե՞լ... Ես անգամ եսպես յեղավ, ի՞նչ արած...

Նուրից նրանք յերկուսն ել լռեցին ու մնացին անխոս իրար դեմ նստած, մինչև վոր մայրս կանչեց նրանց ճաշի: Հարևան Պետրոսը, վոր զեպք յեղած ժամանակ միշտ կը ճաշեր մեզ մոտ, այդ որը, չգիտեմ ինչու, հրաժարվեց:

— Շնորհակալ եմ—ասաց,—դուք անուշ արեք:

Ու նեղացած, տրտում քայլերով դուրս գնաց:


Յեվ այդ որվանից նա այլևս վոտ չդրեց մեր տուն և նույնիսկ գաղարեց մեզ հետ խոսել. և վոչ միայն չեր խոսում, այլև, յերբ մեր շունը, հորթերը կամ հավերը գնում եյին նրա դուռը, նա փետ ու քարով քշում եր նրանց, քթի տակ քրթմնջալով: Մանավանդ խեթ աչքով եր նայում ինձ և չեր սիրում, յերբ ես գնում եյի նրանց տուն նրա տղաների հետ խաղալու:

Ու այս բանը ինձ վշտացնում եր սաստիկ, թե պատճառն ի՞նչ ե, վոր հարևան Պետրոսը չի սիրում ինձ...

* *

Այժմ իմ հիշողությունները պտտվում, պտտվում և կանգ են առնում հարևան Պետրոսի ձիերի վրա:

Տեսնում եմ ահա նրա ձիերը՝ նիհար, վոսկորները ցցված կաշվի տակ, պոչերին ցանցառ ու կարճ, նրա տղաների հետ միա-



սին գալիս են դաշտից կամ առվից: Գալիս են նրանք տխուր ու դանդաղ քայլերով, ինչպես կուվում պարտված ամոթահար զինվոր-

ներ, վոր զգում են, թե այլևս արժանի չեն իրենց կերին ու անվան։
Տեսնում եմ անա, հարևան Պետրոսի իր այդ ձիերից յերկուսը
ցույց ե տալիս յերեք անձանոթ մարդու և ասում նրանց։

— Մի հատ ձիանք են. սաղ նահանգում չկա։ Յերևանի ճամբին...


Ու քիչ հետո այդ անձանոթ մարդիկ, վոր յերկար փափախ
ուեն են յերկար շորեր, տանում են նրա ձիերը մեր տան առջե-
վից սանձերից բռնած։

Դրանից հետո տեսնում եմ՝ հարևան Պետրոսի ձիերից մեկը,
մի սև ճակատը սպիտակ ձի, պառկել ե նրա դրանը, և այդ ձիու
գլխին հավաքվել են դրացիներ, ինքը հարևան Պետրոսը, նրա կի-
նը, յերեխաները և շուներ։ Ձին պառկել ե յերկար ու մեկ, վոտքե-
րը մեկնել, ու զլուխը դրել գետնի վրա։ Յերբեմն նա բաձրացնում
ե զլուխը ու խփում գետին։ Յեվ յերբ նա զլուխը բաձրացնում ե
ու զարկում գետին, փոքրիկ շուներ հաչոցով վրա յե պրծնում
նրան, իսկ հարևան Պետրոսի փոքրիկ տղան, վորի անունը մոռա-
ցել եմ հիմա, հացի կտորը ձեռքին բռնած, խնդում ե ուրախու-
թյունից։

Սրանից հետո ել վոչինչ չեմ հիշում վոչ հարևան Պետրոսի և
վոչ ել նրա ձիերի մասին, վորովհետև այդ ժամանակ կյանքը մի
հարվածով կտրեց ինձ իմ սիրած տնից, իմ լավ ընկերներից և նե-
տեց մի աղմկալի քաղաք, ուր յես սովորում եյի բերականութուն
և մեռած լատինական լեզու, ուր ինձ կերակուր եյին տալի աքա-
ղաղի պատկերով զարդարված պնակով և մետաղե ժանդոտ գդալ-
ներով, ուր բոլորը քայլում եյին պատերի տակով և ուր ամենքը
ոտաբ եյին ինձ։

Մոտ վեց տարի տեեց այս տխուր պանտիստությունը, յերբ
վերջապես դարձա յես մեր տուն։ Յեվ յերբ դարձա տուն, այն-
տեղ արգեն շատ բան եր փոխված։ Մեռել եր իմ սիրելի տատը,
չկար և մեր ծեր շունը, իսկ մեր վանա կատուն գողացել եյին
ինչ-վոր անցորդ բոշաներ։ Դառնալով մեր տուն յես հետքերովում
եյի, թե ինչ ե կատարվել ինձանից հետո. և հետաքրքրվելով հարց
ու փորձ եյի անում ամեն բանի մասին ու դիտում ամեն ինչ։ Յես
ի միջի այլոց, հետաքրքրվեցի և հարևան Պետրոսի, նրա կնոջ և
նրա տղաների վիճակով։ Ամենից շատ ինձ հետաքրքրում եր. ի
հարկե, նրա տղաների վիճակը, թե ուր, վարանդ են նրանք
և վորքան են արդյոք մեծացել։ Ու կանգնած մեր լուսա-
մուտի առջև, նայում եյի յես գեպի նրանց տունը, մեկն ու
մեկին տեսնելու հույսով։ Բայց վոչ վոք չեի յերևում։ Յեվ առա-

ջին բանը, վորի բացակայությունն իսկույն զարկեց իմ աչքին,
դա հարևան Պետրոսի ֆուրգոնն եր։ Մի րոպե յես յենթադրեցի,
թե հարևան Պետրոսը գուցե քաղաք ե գնացել, բայց յերբ իմ հե-
տաքրքիր հայացքը թափառեց նրա տան բակում, յես տեսա, վոր
նրա ֆուրգոնի կեռ ծածկն ընկած եր պատի տակ մի անկյունում
և հավերը նրա վրա թառած, արևի զիմաց քրքրում եյին իրենց



փետուրները։ Քիչ հետո սակայն տնից դուրս յեկավ հարևան Պե-
տրոսի կինը՝ տարիքին անհամապատասխան պառաված, գոգնոցի
փեշերը բռնած, և կուտ ավեց հավերին։ Այդ տեսնելով, յես դար-
ձա մորս և հարցրի, թե ինչ են անում հիմա հարևան Պետրոսը և
նրա տղաները։

Մայրս չգիտեր, թե ո՞րտեղ են իսկապես նրա տղաները, բայց
հարևան Պետրոսի մասին հայտնեց, վոր նա ծառայում ե մեր
գյուղի կայարանում...

...Այո, ընկերներ, նա մինչև այսօր ել ծառայում ե մեր
գյուղի կայարանում։

Յերբ դուք ճամբորդեք մեր կողմերը, ձեզ կհանդիպի մի փոք-
րիկ կայարան, վորի առջև հակադական կերոնների նման, կանգնած
են յերեք բարտի ծառ, և վորը ունի մի արբեցող կայարանապետ,
մի հեռախոս, պեպենոտ դեմքով մի տոմսավաճառուհի և մի ջրի


ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

տակառ, վորի ջուր խմելու ամանը շաքարի թելով կապած է նրան:


Այդ կայարանում դուք կտեսնեք սպիտակ մորուքով, կիսամուշտակով և ավելը կռան տակին մի ծերունի: Դուք կտեսնեք նրան կայարանի լապտերի սյունի մոտ կանգնած:

Նա ամեն ուր, ուր յերկու անգամ, կանգնում է այդտեղ և սպասում, վոր գնացքը հեռանա: Իսկ յերբ գնացքը շփոցով ու շրխ-



կոցով շարժվում է տեղից, և մարդիկ ցրվում են իրենց տները, նա վերցնում է ավելը կռան տակից և սկսում է սրբել պլատֆորմը՝ մարդկանց թողած կեղտից, վորի մեծ մասը լինում է արևածաղկի սերմ և ընկույզի կճեպ:

Դա հենց ինքը մեր հարևան Պետրոսն է:



ՀՀ Ազգային գրադարան



NL0400074

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

8553

02351

807

1
1



20